ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ԼԱՄՊԵՐ

Վաղուց արդեն շիկացման թելիկով լամպերի հետ միասին սպառողներին հասանելի են էներգապես ավելի արդյունավետ լյումենիսցենտային և լուսադիոդային լամպերը, որոնց օգտագործումը էլեկտրաէներգիայի ծախսը կարող է կրճատել մի քանի անգամ:

Շիկացման թելիկով լամպերի արդյունավետությունը շատ ցածր է, ծախսած ամբողջ էներգիայի 80%-ը վեր է ածվում ջերմության, ինչը բացի էներգիայի ավելորդ ծախսի, որոշակի անհարմարություն է ստեղծում շոգ եղանակին:

Շիկացման, լյումինեսցենտային և լուսադիոդային լամպեր

Վերջին տարիներին մեծ տարածում են գտնում լյումինեսցենտային լամպերը: Համեմատած շիկացման թելիկով լամպերի հետ՝ դրանց առավելությունները ակնհայտ են: Առաջինը դրանց շահագործման երկար ժամանակն է (մոտավորապես 6-8 անգամ): Երկրորդը դրանց արդյունավետությունն է, օրինակ, 20 Վտ հզորությամբ լյումինեսցենտային լամպը նույն պայծառությամբ լույս է արձակում, ինչ սովորական 100 Վտ հզորությամբ լամպը: Չնայած լյումինեսցենտային լամպերն ավելի թանկ արժեն, սակայն նշված հատկությունների շնորհիվ դրանց օգտագործումը ավելի շահավետ է:

Լուսադիոդային լամպերի օգտագործումը մի քանի տարվա պատմություն ունի, և այդ ընթացքում այն հասցրել է նվաճել շատերի վստահությունը իբրև երկարակյաց, էկոլոգիապես մաքուր և էներգաարդյունավետ լույսի աղբյուր: Մեր երկրում վստահությունը այդ լամպերի նկատմամբ օրեցօր աճում է և դրանց կիրառումը կենցաղում ավելի մասսայական դառնում: